

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

23. 05. 2016թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա. Դարբինյան - մարզպետի տեղակալ
Տ. Բաղդյանը - մարզպետի տեղակալ
Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար
Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Հ. Պապոյանը, Ա. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Ա. Զանազյանը, Դ. Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Ա. Օհանյանը, Լ. Բերոյանը, Ս. Ղուբաթյանը, Ա. Աղլոյանը, Վ.Դոխոյանը, Հ. Մկրտչյանը, Ն. Համբարձումյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
Լ. Ասլանյանը, Ա. Մանուկյանը - մարզպետի խորհրդականներ
Ա. Սարգսյանը , Տ. Էվինյանը - մարզպետի օգնականներ
Ա. Չատինյանը - ԱԻՆ Լոռու մարզային ՀՓԾ վարչության ներկայացուցիչ

Օր ա կ ա ր գ ու մ`

1. Անցած շաբաթվա ընթացքում մարզում տեղի ունեցած արտակարգ դեպքերի մասին- զեկ. Հ.Անտոնյան
2. Նախորդ շաբաթվա ընթացքում տրված հանձնարարականների կատարման մասին- զեկ. Ն.Սարգսյան
3. Սեփական եկամուտների մասին -զեկ.Հ.Պապոյան
4. Ամառային զորակոչի կազմակերպչական աշխատանքների մասին- զեկ. Ս.Ղուբաթյան
5. Ամառային զորակոչի պատվաստումների ընթացքի մասին- զեկ. Ս.Լամբարյան
6. Դպրոցականների կցագրման գործընթացի մասին- զեկ. Մ.Սայադյան
7. Նախազորակոչայինների կցագրման մասին- զեկ. Դ.Մանուչարյան
8. <<Հայջրմուղկոյուղու >> եվ <<Լոռիջրմուղկոյուղու>> սպասարկման տարածքի` համայնքներին պատկանող գույքի հանձնման մասին- զեկ. Ա.Զանազյան
9. Նախորդ շաբաթ ՀՀ Գյուղատնտեսության նախարարի այցի հետ կապված ամփոփ տեղեկատվություն- զեկ. Գ.Հակոբյան
10. Ծառայողական մեքենաների վերաբերյալ
- 11 . Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Տ. Բաղդյանին, Հ. Թադևոսյանին, Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին`

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշների կատարումն ապահովելու ուղղությամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Տ. Բաղդյանին, Հ. Թադևոսյանին, Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Օհանյանին՝

Ուսումնասիրել մարզի համայնքների կողմից հողերի վարձակալության վճարների գանձման ընթացքը և կազմակերպել քննարկումներ համայնքների ղեկավարների հետ տվյալ բնագավառի պլանային ցուցանիշները ապահովելու նպատակով:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գորակոչային նախապատրաստության բաժնի պետ Ս. Ղուբայանին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել ամառային գորակոչը պատշաճ կարգով կազմակերպելու և իրականացնելու ուղղությամբ, զինվորական կոմիսարների հետ քննարկել և ըստ անհրաժեշտության հրավիրել մարզային գորակոչային հանձնաժողովի նիստ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել մարզի համայնքների ղեկավարների կողմից կցագրման աշխատանքների իրականացման նկատմամբ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին՝

ա) 1-օրյա ժամկետում տրամադրել տեղեկատվություն համայնքների և հողօգտագործողների կողմից պարարտանյութի դիմաց գանձված և վճարված գումարների վերաբերյալ:

բ) Համայնքների ղեկավարներին և հողօգտագործողներին տեղեկացնել ՀՀ Ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղում գործող հողի անալիզի լաբորատորիայի հիմնադրման վերաբերյալ և առաջարկել օգտվելու նշված ծառայությունից:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ